Պատմաբանների գնահատականը Մեծ Եղեռնին. կա՞ արդյոք փոխհամաձայնություն գիտական շրջանակներում*

ԱՄԻՐ ԱԶԱՐՎԱՆ
Գվինեթ քոլեջ, Ջորջիա նահանգ, Միացյալ Նահանգներ

Ստացված է 09.05.2015
Ընդունված է 21.05.2016

Չնայած Հայոց Ցեղասպանությանը բազմիցս անդրադարձ կատարվել է, սակայն հարցի վերաբերյալ գիտական փոխհամաձայնության առկայությունը որոշելուն ուղղված փորձերը սակավաթիվ են: Ընդ որում, դրանց մեծ մասը սահմանափակ են և ոչ համոզիչ, քանզի հետազոտողները չեն հենվում բացառապես Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ հատուկ հետաքրքրություն, գիտելիք կամ մասնագիտություն ունեցող գիտնականների կարծիքների վրա: Ուստի, հոդվածում փորձ է արվում բացահայտել այդ փոխհամաձայնության առկայությունը կամ դրա բացակայությունն օսմանագետների շրջանում անցկացված առցանց հարցման հիման վրա:

Բանալի բառեր
Ցեղասպանություն, գիտական փոխհամաձայնություն, հայեր, Օսմանյան Թուրքիա, թուրքական ծագում, օսմանագետներ:

Նախաբան

Օսմանյան կայսրության վերջին տարիներն առանձնացան լայնածավալ միջհամայնքային բռնություններով: Դրանք հաճախ բնորոշվում են որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, որի արդյունքում սպանվեց 1.5 միլլիոն հայ: 1915թ. զանգվածային սպանությունները՝ հայերի շրջանում հայտնի որպես Մեծ Եղեռն, Ցեղասպանության ակտ, մինչ օրս պաշտոնապես ճանաչել են ավելի քան քսան երկրներ և Եվրոպական միությունը[1]: Այդուհանդերձ,

---

* Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Է. Ուիլքին՝ հետազոտության մեթոդաբանության ընտրմանն աջակցելու համար, ինչպես նաև ուսանողներ Լ. Աբդելշահիդին, Ֆ. Ահմեդին, Ֆ. Ալիուին, Ա. Բենեթին, Ա. Բոնդսին, Մ. Դեյվիսին, Բ. Դինինգրին, Է. Էլխատիբին, Ռ. Էմերին, Լ. Գրեյսոնին, Ջ. Հոլքոմբին, Ք. Պիեռ-Լուիին, Գ. Սալդանային և Թ. Վինինգին հետազոտության ընթացքին աջակցելու համար:

ժամանակ առ ժամանակ գիտական քննարկումների առարկա է դառնում այն հարցը, թե արդյոք տեղի ունեցածը համապատասխանում է «Ցեղասպանություն» եզրույթի միջազգային իրավական սահմանմանը[2]: Արդյո՞ք, ինչպես հաճախ ենթադրվում է, օսմանագետների շրջանում կա փոխհամաձայնություն հարցի վերաբերյալ: Օսմանագետների շրջանում անցկացված հարցման արդյունքները փաստում են դրա առկայությունը:

Հոդվածի կառուցվածքը հետևյալն է. նախ քննարկվում են նախորդ փորձերը, որոնք նպատակ ունեն ցույց տալու 1915թ. զանգվածային սպանությունների վերաբերյալ գիտական փոխհամաձայնության առկայությունը, ապա, հետազոտության կառուցվածքն ու մեթոդը պարզաբանելուց հետո, ներկայացվում և մեկնաբանվում են հիմնական եզրակացությունները:

Օգտագործված եզրաբանության համառոտ ակնարկ

Որպեսզի կարծիք չձևավորվի, որ անուղղակիորեն հրաժարվում եմ հայերի դեմ 1915թ. տեղի ունեցածը կոչել Ցեղասպանություն, հարկ եմ համարում մեկնաբանել օգտագործված եզրաբանությունը: Հոդվածում օգտագործվում է «զանգվածային սպանություններ» եզրույթը մասամբ այն պատճառով, որ Ցեղասպանության եղելության փաստը, ըստ նրանց, ովքեր առավել իրազեկ են օսմանյան պատմության էջերից, հենց այն է, ինչ ներկայացվում է հոդվածում: Հետևաբար, այդ իրադարձությունը կոչել ցեղասպանություն նույնն է, ինչ ասել. «Հոդվածում քննարկվում է՝ արդյոք Հայոց Ցեղասպանությունն օսմանագետների տեսանկյունից ցեղասպանություն էր»: Ուստի, հարկ եմ համարում խուսափել փաստարկման այդպիսի

[1] Recognition of the Armenian Genocide, http://genocide.am/article/recognition_of_the_armenian_genocide.html, 11.01.2016.

[2] Մասնավորապես 1948թ. Ցեղասպանության կոնվենցիան, որը ցեղասպանությունը սահմանում է որպես ‹‹ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման կանխամտածված ակտ››, Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, https://treaties.un.org/doc/Publication/UNTS/Volume%2078/volume-78-I-1021-English.pdf, 01.03.2016:

շղթայականությունից: «Զանգվածային սպանությունները» չեզոք այլընտրանք է, քանզի պատմաբանները, ովքեր տարակարծիք են՝ ինչպես պետք է որակել տեղի ունեցածը, այդուհանդերձ համակարծիք են, որ զանգվածային սպանություններ տեղի ունեցել են:

Կա՞ արդյոք փոխհամաձայնություն գիտական շրջանակներում

Հաճախ ներկայացվում է, որ օսմանագետների զգալի մասը համակարծիք է, որ 1915թ. զանգվածային սպանությունները համապատասխանում են ցեղասպանության իրավական սահմանմանը[3]: «Պատմաբանների զգալի մասն ընդունում է, որ դա այդպես է», պնդում է Ռոնալդ Սյունին[4]: Միաժամանակ, կան նաև հայտնի պատմաբաններ, ովքեր կասկածի տակ են առնում ենթադրյալ գիտական փոխհամաձայնությունը: Նրանց թվում են Բ. Լյուիսը (Մերձավոր Արևելքի մասնագետ, Փրինսթոնի համալսարանի պատվավոր պրոֆեսոր), Հ. Լոուրին (Մերձավոր Արևելքի մասնագետ, Փրինսթոնի համալսարանի պատվավոր պրոֆեսոր), Ջ. Մքքարթին (պատմական գիտությունների պրոֆեսոր, Լուիսվիլ համալսարան) և Է. Ջաքելը (պատմական գիտությունների պատվավոր պրոֆեսոր, Շտուտգարտի համալսարան): Հետևաբար, կարևոր է պարզել. արդյո՞ք վերոնշյալ մասնագետները բացառություն են կազմում: Ի՞նչ ջանքեր են գործադրվել հիմնավորելու այդ ակնհայտ փոխհամաձայնությունը:

Ավելի քան երեսուն տարի առաջ վաթսուն թուրքագետներից կազմված մի խումբ ստորագրեց ԱՄՆ Կոնգրեսին ուղղված բաց նամակ, որով ժխտում էր, որ 1915թ. սպանությունները կարելի է որակել որպես ցեղասպանություն[5]: Սակայն, ամփոփելով Միացյալ Նահանգների հայկական համագումարի իրականացրած հետազոտությունը, Չարնին պնդում է, որ նրանց մեծամասնությունը

---

[3] **Cohan S.,** A Brief History of the Armenian Genocide, *Social Education,* 69, 2005, pp. 333–337.

[4] BBC, "Head to head: Were massacres of Armenians genocide?", March 4, 2010, մատչելի է http://news.bbc.co.uk/2/hi/europe/7042209.stm, 12.11.2015.

[5] **Hovannisian R.,** Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide, Detroit, MI, Wayne State University Press, 1998.

ցեղասպանության ժամանակաշրջանի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներ չեն[6]:

Մեկ այլ՝ ավելի ուշ շրջանի, բաց նամակում՝ ուղղված Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին, ով պահանջել էր իրականացնել «պատմաբանների անաչառ ուսումնասիրություն» Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության տարածքում հայ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան 2005 թվականին հավաստիացնում էր նամակի հասցեատիրոջը, որ «Հայոց Ցեղասպանությունը հաստատում են միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրությունները»[7]: Ի հավելումն այդ տեսակետը հաստատող միաձայն ընդունած բանաձևի, ասոցիացիան առանձնահատուկ մեջբերում է ականավոր գործիչների, Հոլոքոստի ուսումնասիրությամբ զբաղվողների, «առաջատար տեքստերի», ցեղասպանության վերաբերյալ հետազոտական ինստիտուտների կարծիքները: Այնդուհանդերձ, չնայած ներկայացված տպավորիչ ցանկին, ասոցիացիան չի անդրադառնում օսմանյան ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ գիտելիք կամ առանձնահատուկ հետաքրքրություն ունեցող մասնագետներին:

Այլ կերպ ասած, գիտական շրջանակների փոխհամաձայնությունը ներկայացնելու նախորդ փորձերը սահմանափակ են մասամբ այն պատճառով, որ եզրակացությունները հիմնված չեն այն հետազոտողների կարծիքների վրա, ովքեր առավել բարձր որակավորում ունեն այդ իրադարձությունների մասին խոսելու համար: Այնպիսի մեթոդներ, ինչպիսիք կիրառվել են ցույց տալու գիտական փոխհամաձայնության առկայությունն, օրինակ, կլիմայի փոփոխության վերաբերյալ, օգտագործելով գրախոսվող գիտական հանդեսների հոդվածների ամփոփումների վերլուծություններից[8] մինչև կլիմայա-

---

[6] **Charny I.,** The Psychological Satisfaction of Denials of the Holocaust or Other Genocides by Non-Extremists or Bigots, and Even by Known Scholars, IDEA, 6, 2001, http://www.ideajournal.com/articles.php?id=27, 01.11.16.

[7] International Association of Genocide Scholars, A Letter from the International Association of Genocide Scholars, June 7, 2005, 14.01.2016.

[8] **Oreskes N.,** The Scientific Consensus on Climate Change, *Science*, 306, 2004.

գետների շրջանում անցկացված հարցումներ[9], թվում է, չեն օգտագործվել հայերի զանգվածային սպանությունների վերաբերյալ գիտական կարծիքի չափման համար:

Հետազոտության կառուցվածքն ու մեթոդները

Հարցման մասնակիցների ընտրության մեթոդը հիմնվել է «պատմություն», «բաժին», «ֆակուլտետ», «օսմանյան պատմություն» եզրույթների առցանց որոնման վրա: Այնուհետև, առցանց որոնումը կենտրոնացվել է միայն ֆակուլտետների վեբ կայքերի վրա՝ շուրջ 200 որոնման արդյունքներից: Արդյունքում, հարցմանը մասնակցելու համար հրավիրվել են միայն այն դասախոսները, որոնց հետազոտությունը, մանկավարժական հետաքրքրությունների շրջանակը կամ մասնագիտությունը ներառում է Օսմանյան կայսրության պատմությունը: Հարցմանն արձագանքել են քսանյոթ օսմանագետ (պատասխանների ընդհանուր ցուցանիշ՝ 23 տոկոս): Չնայած այդ փոքր թվին՝ այդուհանդերձ պետք է նկատել, որ ընդհանուր առմամբ օսմանագետների քանակը բավական սահմանափակ է: Բացի այդ, պատասխանների ընդհանուր ցուցանիշի կարևորությունը թվում է փոքր ինչ ուռճացված: Քարլի-Բեքսթերը և այլոք գտնում են, որ չնայած հասարակական գիտությունների ոլորտի հետազոտողների շրջանում ձևավորված ընդհանուր տպավորությանը, հանդեսների խմբագիրները սովորաբար մեծապես չեն կարևորում պատասխանների ընդհանուր ցուցանիշը հրապարակման որոշում կայացնելիս: Փոխարենը, նրանք նշում են, որ շատ հետազոտներ աշխատանքի արժեքը ավելի շուտ պայմանավորում են ոչ չափելի կամ գլոբալ հասկացություններով, ինչպիսին է կառուցվածքը, քան հարցման որակի ցուցիչները[10]:

---

[9] **Anderegg W.,** et al., Expert Credibility in Climate Change, *PNAS,* 107, 2010, 12107-12109.

[10] **Carley-Baxter L. R., et al,** Does Response Rate Matter? Journal Editors Use of Survey Quality Measures in Manuscript Publication Decisions, *Survey Practice* 7, 2009, մատչելի է http://www.surveypractice.org/index.php/SurveyPractice/article/view/192/html, 01.11.2016.

Հարցման մասնակիցներին ուղղվել է հետևյալ հարցը. «Կարծու՞մ եք, որ Օսմանյան Թուրքիայում 1915թ. էթնիկ հայերի զանգվածային սպանությունները Օսմանյան կառավարության՝ էթնիկ հայ համայնքի անդամներին ամբողջությամբ կամ մասնակի բնաջնջելու, կանխամտածված ծրագրի հետևանք էին»: Հարցաթերթիկում ներառված էին նաև հարցեր մասնակցի կրոնական և էթնիկ պատկանելության վերաբերյալ: Վերջինի առնչությամբ, ակնկալվում էր, որ թուրքերը կհրաժարվեին մասնակցությունից՝ ազգայնական դրդապատճառներով: Քանզի շատ հարցվածներ ունեին խառը էթնիկ պատկանելություն, ուստի հարցվածների պատկանելությունը թուրքական էթնոսին չափվել է ըստ էթնիկ ծագման տոկոսային հարաբերակցության:

Փոխհամաձայնության չափում

Նախքան ներկայացնելը 1915թ. զանգվածային սպանությունների վերաբերյալ գիտական փոխհամաձայնության առկայությունը կամ բացակայությունը, հարկ է սահմանել այդ ոչ միանշանակ եզրույթը: Պետք է այն սահմանել որպես ընդհանու՞ր, թե՞ որպես միաձայն համաձայնություն[11]: Առաջինի դեպքում, անհրաժեշտ է որոշել ընդհանրության այն աստիճանը, որի համար համաձայնությունը կարող է որակվել որպես փոխհամաձայնություն: Քանզի չկա փոխհամաձայնություն «փոխհամաձայնության» վերաբերյալ, ստորև ներկայացված է, թե ինչպես է օգտագործվել այդ եզրույթը:

Որպես կանոն, այնպիսի բարդ հարցերի վերաբերյալ, ինչպիսին է 1915թ. զանգվածային սպանությունները, կան տարամիտվող կարծիքներ: Ուստի, փոխհամաձայնությունը չի կարող ենթադրել նման հարցերի շուրջ միաձայնություն: Սակայն հարց է առաջանում, թե որ մեծամասնությունը կարելի է որակել որպես փոխհամաձայնություն. պա՞րզ (50%+1), թե՞ բացարձակ մեծամասնությունը (օրինակ, 2/3 կամ 3/4): Այդ տարբերակներից որևէ մեկը կամայա-

[11] Ուեբսթերի բացատրական բառարանը ‹‹փոխհամաձայնության›› երկու սահմանումներն էլ տալիս է: http://www.yourdictionary.com/consensus, 22.01.2016:

կանորեն ընտրելու փոխարեն՝ հոդվածում տարբերակվում է փոխհամաձայնության հետևյալ երեք մակարդակները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Փոխհամաձայնության մակարդակներ

Փոխհամաձայնության տեսակ	*Չափման միջակայք*
Մեծամասնության կարծիք	50%+1 – 2/3-ից պակաս
Փոխհամաձայնություն	2/3 – 3/4-ից պակաս
Ամուր փոխհամաձայնություն	3/4 և ավել

Արդյունքներ և մեկնաբանություն

Հարցվածների 74 տոկոսը համակարծիք էր այն հայտնի տեսակետի վերաբերյալ, որ 1915թ. զանգվածային սպանությունները կառավարության՝ էթնիկ հայ համայնքի անդամներին ամբողջությամբ կամ մասնակի բնաջնջելու, կանխամտածված ծրագրի հետևանք էին (տես նկար 1): Հարցվածների միայն 15 տոկոսը ժխտեց, որ սպանությունները կառավարության՝ ցեղասպանություն իրագործելու, ծրագրի հետևանք էին: Մնացած 11 տոկոսը կամ անտարբեր էին հարցի նկատմամբ, կամ ունեին ոչ միանշանակ դիրքորոշում:

Նկար 1. Օսմանագետների դիրքորոշումն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք 1915թ. զանգվածային սպանությունները Օսանյան կառավարության՝ հայ համայնքը բնաջնջելու, կանխամտածված ծրագրի հետևանք էին



Զարմանալիորեն, հինգ զտարյուն թուրք հարցվածներից երեքը (և թուրքական արմատների մասին հայտնած ինը հարցվածներից վեցը) ընդունեցին, որ 1915թ. զանգվածային սպանությունները կառավարության՝ ցեղասպանություն իրագործելու ծրագրի, հետևանք էին: Այսպիսի տվյալների մասին պետք է բարձրաձայնել՝ հերքելու այն կարծիքը, որ հարցի վերաբերյալ անհամաձայնությունը թուրքականությանը բնորոշ ասպեկտ է: Ամբողջ թուրք հասարակության ոչ ավել քան 9.1 տոկոսը, ովքեր, ենթադրվում է՝ պակաս իրազեկ են Օսմանյան ժամանակաշրջանի պատմությունից, քան սույն հարցման մասնակիցները, գտնում է, որ կառավարությունը պետք է ճանաչի զանգվածային սպանությունները՝ որպես ցեղասպանություն[12]: Սակայն, եթե հաշվի առնենք այս կարծիքին հարող թուրքերի բացարձակ թիվը (ավելի քան

[12] Center for economic and Foreign Policy Studies , Turks Regretful over the Armenian Tragedy of 1915 but Refuse to Qualify it as a Genocide, 2005, http://www.edam.org.tr/en/File?id=2162, 07.03.2016.

7 միլիոն[13], ինչը գերազանցում է ԱՄՆ-ի Վաշինգտոնի նահանգի բնակչությանը), ապա կարելի է հակադրվել այն կարծրատիպին, որ բոլոր թուրքերը ցեղասպանության ժխտողներ են:

Եզրակացություն

Սույն ուսումնասիրությունն առաջին փորձն է պարզելու՝ արդյոք օսմանագետների շրջանում կա փոխհամաձայնություն 1915թ. էթնիկ հայերի զանգվածային սպանությունները ցեղասպանություն որակելու հարցում: Չնայած հոդվածում ներկայացված տվյալները հարկ է ընդունել զգուշավորությամբ, քանզի դեռ անհրաժեշտ է պարզել՝ արդյոք դրանք կարող են տարածվել օսմանագետների ավելի մեծ թվաքանակի վրա, այդուհանդերձ փոխհամաձայնության առկայությունն արձանագրվեց պատմաբանների շրջանում անցկացված հարցման արդյունքում: Հարցվածների գրեթե երեք քառորդն ընդունեց, որ սպանությունները Օսմանյան կառավարության՝ հայ համայնքի անդամներին ամբողջությամբ կամ մասնակի բնաջնջելու, կանխամտածված ծրագրի հետևանք էին, հետևաբար, ցեղասպանություն էին:

[13] Այս թիվը կարող լինել ավելի փոքր, եթե բացառենք էթնիկ քրդերին:

Historians' Assessment of the Medz Yeghern: Is There a Scholarly Consensus?

AMIR AZARVAN
Georgia Gwinnett College

Although much has been spoken of and written about the Armenian Genocide little has been done to identify whether there is a scholarly consensus on the subject matter. Most of the previous attempts seem to be limited and non-persuasive for the researchers does not purely rely on the opinions of scholars with the specific interest in, knowledge of or a specialty in the Ottoman history. Drawing upon this lack, the article attempts to answer whether such consensus really exists based on the online survey held among the Ottoman historians.